



**Բնագիտական, տեխնիկական,  
մաթեմատիկական, տեխնոլոգիական  
կրթության հիմնախնդիրներին  
նվիրված համահայկական կրթական  
գիտաժողով**

**«Բնագիտությունը, մաթեմատիկական, տեխնիկական,  
ինֆորմատիկական XXI դարում. հանրամատչելիացման և  
ուսուցման հիմնախնդիրներ ու լուծումներ»**

**17-18 հոկտեմբերի, 2025 թ.**

**Կազմակերպիչներ՝**

**ՀՀ ԳԱԱ**

**ՀՀ ԿԳՄՍՆ**

**ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն**

**Հարգարժան գործընկեր**

Հրավիրում ենք մասնակցելու «Բնագիտությունը, մաթեմատիկական, տեխնիկական, ինֆորմատիկական 21-րդ դարում. հանրամատչելիացման և ուսուցման հիմնախնդիրներ ու լուծումներ» խորագրով համահայկական 8-րդ կրթական գիտաժողովին, որը տեղի կունենա 2025 թ. հոկտեմբերի 17-18-ին, ՀՀ ԳԱԱ-ում: Կրթական գիտաժողովում կքննարկվեն հանրակրթական և բուհական ոլորտներում բնական գիտությունների, մաթեմատիկայի, ինֆորմատիկայի, տեխնոլոգիաների հանրամատչելիացման և նրանց հիմունքների ուսուցման հիմնախնդիրները: Գիտաժողովին, ստորև ներկայացված պայմաններին ու պահանջներին համապատասխան, կարող են մասնակցել դպրոցների ուսուցիչներ, բուհերի դասախոսներ, գիտաշխատողներ, քոլեջների դասատուներ, նշված խնդիրներով զբաղվող մագիստրոսներ, ասպիրանտներ և կրթության ոլորտի մասնագետներ:

Հասցեն՝ Երևան, Բաղրամյան 24, ՀՀ ԳԱԱ

Նախատեսվում է քննարկել հետևյալ թեմաները.

- Ֆիզիկայի և աստղագիտության հանրամատչելիացման և ուսուցման հիմնախնդիրները
- Մաթեմատիկայի հանրամատչելիացման և ուսուցման հիմնախնդիրները
- Քիմիայի հանրամատչելիացման և ուսուցման հիմնախնդիրները
- Կենսաբանության հանրամատչելիացման և ուսուցման հիմնախնդիրները
- Ինֆորմատիկայի հանրամատչելիացման և ուսուցման հիմնախնդիրները
- Բնագիտություն ուղղության հանրամատչելիացման և ինտեգրացված առարկայի դասավանդման առանձնահատկությունները
- Ֆիզիկական աշխարհագրության հանրամատչելիացման և ուսուցման հիմնախնդիրները
- Մաթեմատիկայի դերը բնագիտության ուսուցման գործընթացում
- Բնագիտական առարկաների դասավանդման գործնական ուղղվածության ապահովման ուղիները
- Բնագիտական կրթության հանրամատչելիացման և ինֆորմատացման հիմնախնդիրները
- Ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները կրթական համակարգում
- Բնագիտական առարկաների դերը ճարտարագիտական, տեխնիկական և տեխնոլոգիական կրթության համակարգում
- Օլիմպիադաներ և աշխատանք՝ օժտված երեխաների հետ
- Գիտամեթոդական և գիտահանրամատչելի գրականության դերը արդիականացվող կրթական համակարգում:

Տեղեկատվություն.

ՀՀ ԳԱԱ կայք և «Գիտություն» թերթ,

Լրացուցիչ տեղեկատվության համար զանգահարել՝ 094 287888

Զեկուցումների և թեզիսների ներկայացման կարգը

Գիտաժողովին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև 2025թ. հոկտեմբերի 10-ը ներկայացնել հոդվածի էլեկտրոնային օրինակը: Կրթական գիտաժողովի աշխատանքներին մասնակցել ցանկացողները կազմկոմիտե պետք է ներկայացնեն հետևյալ նյութերը.

- մասնակցության հայտ
- ելույթի կամ զեկուցման թեզիսները էլեկտրոնային և տպագիր օրինակով՝ մինչև 5 տպագիր էջ ծավալով, Word document ձևաչափով:
- Ներկայացման վերջին ժամկետը 2025թ. սեպտեմբերի 25-ն է:
- Զեկուցումները և թեզիսները անհրաժեշտ է ուղարկել [katayan@sci.am](mailto:katayan@sci.am) էլ. հասցեին:

Ներկայացվող նյութերի ձևակերպման պահանջները

Հոդվածները պետք է գրվեն հետևյալ պահանջներին համապատասխան. նյութի առավելագույն ծավալը 5 էջ, տեքստի համակարգչային ծրագիրը՝ Microsoft Word, տառատեսակը՝ Times New Roman (ռուսերենի, անգլերենի համար) և GHEA Grapalat (հայերենի համար), տառաչափը՝ 12, տողերի միջակայքը՝ 1,5, վերևի, նեքևի և աջ լուսանցքները՝ 2,0, ձախ լուսանցքը՝ 3,0 սմ՝ ստանդարտացված: Հոդվածը սկսվում է վերնագրով, որը գրվում է կենտրոնում՝ գլխատառերով, թավ: Վերնագրից հետո նշվում են հեղինակի ազգանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը, քաղաքը և կազմակերպությունը՝ աջ անկյունում, շեղատառ: Աղյուսակները պետք է կազմվեն Word ծրագրով, ունենան վերնագիր և համար: Նկարները պետք է ունենան մակագրություն և համար: Հոդվածում հստակորեն պետք է ներկայացված լինեն հարցի դրվածքը, կրթական նորույթը, իսկ վերջում՝ օգտագործված գրականության ցանկը և նյութի հակիրճ ամփոփումը՝ մինչև 50 բառ՝ անգլերեն, ռուսերեն կամ հայերեն, կախված հոդվածի շարադրման լեզվից: Տեքստում գրականության մեջբերումը նշվում է ուղիղ փակագծերում՝ գրելով գրականության ցանկում համապատասխան աղբյուրի համարը և էջը՝ օրինակ՝ [3, էջ 14]:

Գիտաժողովի աշխատանքային լեզուն հայերենն է, իսկ առանձին աշխատանքներ կարող են ներկայացվել ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Գիտաժողովին ներկայացված և գրախոսված նյութերից կիրատարակվի գիտամեթոդական հոդվածների էլեկտրոնային ժողովածու:

Գիտաժողովի կազմակերպման մասին տեղեկատվությունը առաքվում է Երևան քաղաքի և մարզային կրթության բաժիններ, ՀՀ բուհեր, ինչպես նաև ՄՄՈՒՀ-եր և սփյուռքի հայկական կրթօջախներ:

Տեղեկատվությունը տեղադրված է ՀՀ ԳԱԱ և ՀՀ ԿԳՄՍ նախարարության կայքերում ([www.sci.am](http://www.sci.am), [www.escs.am](http://www.escs.am)):

Գիտաժողովին մասնակցել ցանկացողները լրացված համապատասխան հայտը և թեզիսները կազմկոմիտե են ներկայացնում մինչև ս.թ. հոկտեմբերի 10-ը՝ վերը նշված հասցեով:

Թեզիսները, որոնք ներկայացված պահանջներին չեն բավարարում կամ ուղարկվում են նշված ժամկետներից ուշ, չեն քննարկվում:

Գիտաժողովի նյութերի էլեկտրոնային ժողովածուն կտպագրվի գիտաժողովում զեկուցելուց և խմբագրական խորհուրդի կողմից հոդվածը խմբագրելուց հետո՝ 6- ամսյա ժամկետում:

Գիտաժողովին կարելի է մասնակցել ինչպես զեկուցումով, այնպես էլ առանց զեկուցման:

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԿՈՄԻՏԵ

## ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

**«Բնագիտությունը 21-րդ դարում. Հանրամատչելիացման և ուսուցման  
հիմնախնդիրներ ու լուծումներ»  
17-18 հոկտեմբերի 2025թ.**

## Մասնակցության հայտ

Անուն, ազգանուն, հայրանուն \_\_\_\_\_

Գիտական աստիճանը, կոչումը -----

Աշխատանքի վայրը, պաշտոնը \_\_\_\_\_

Աշխատավայրի հասցեն \_\_\_\_\_

Հեռախոս ----- էլ. փոստ -----

## Ներկայացնելու եմ գեկուցում

այն ոչ

Մասնակցելու են հյուրի կարգավիճակով

այո                                  ոչ

Զեկուցման թեման -----

---

---

Ձեկուցման համար անհրաժեշտ են տեխնիկական միջոցներ (համակարգիչ, պրոյեկտոր, և այլն)

այն նչ

Ստորագրություն \_\_\_\_\_

Ամիս, ամսաթիվ \_\_\_\_\_